ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
<<ՀՐԱԶԴԱՆԻ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ13 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

---

2301
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն 49

Հեռ. /0223/ 2-64-04
e:mail hrazdan13@schools.am

09.09.2024թ 298
---------------------N---------------

**«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ** –ի ծրագրերի տնօրեն
Միքայել Նիգարյանին

Հարգելի պարոն Նիգարյան

Ձեզ եմ ներկայացնում ԿԳՄՍՆ <<Հրազդանի Հովսեփ Օրբելու անվան թիվ 13 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար **<<ԿԳՄՍՆ-ՀՕԱԹ13ԱԴ -** ԳՀ **- ԱՊՁԲ -24/11>>** ծածկագրով << Հպումով կառավարվող վահանակների >> ապրանքների ձեռքբերման համար, գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հետ կապված «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից պարզաբանման հարցման պատասխանները ըստ հերթականության:

Հարցերը

1. Ինչպե՞ս կարող է **220 վոլտ վարդակին միացվող** Հպումով կառավարվող դիսպլեի **Էլեկտրական սնուցումը** լինել «DC 5V±5%, Էլեկտրական հոսանք».

2. Արդյոք **OPS համակարգիչը** պետք է ներառվա՞ծ լինի մատակարարման ենթակա հպումով կառավարվող **դիսպլեի կազմի մեջ**:

3. Ո՞րն է OPS համակարգչի Intel Core i5 պրոցեսսորի **նվազագույն ընդունելի սերունդն** և **մոդելը**.

4. Ի՞նչ **արտոնագրված ծրագրային ապահովում** (Windows 10 / 11, MS Office և այլն) պետք է ներառված լինի **OPS համակարգչի կազմում**:

5. Արդյոք **դիսպլեի պատի կախիչը** պետք է ներառվա՞ծ լինի մատակարարման ենթակա հպումով կառավարվող **դիսպլեի կազմի մեջ:**

6. Ի՞նչ է նշանանակում «Որակավորված վկայագիր» արտահայտությունը:

7. Արդյոք մատակարարը պետք է ունենա՞ համապատասխան **տեխնիկական սպասարկման կենտրոն** կամ **համապատասխան պայմանագիր ՀՀ**-ում գործող **առաջարկվող սարքերի սպասարկման մա**սնագիտացված որևէ կենտրոնի հետ:

Պատասխանները

1-ին հարցի հետ կապված. Ձեր նշած տվյալը վերաբերում է Touch-ին, իսկ ամբողջական վահանակի սնուցման պարամետրերը նշված են Power բաժնում:

2-րդ հարցի հետ կապված. Այո պետք է ներառված լինի:

3-րդ հարցի հետ կապված. Նախընտրելի սերունդ և մոդել չկա, կարող եք դուք առաջարկել:

4-րդ հարցի հետ կապված. Ինչպես նշված է՝ Windows 10:

5-րդ հարցի հետ կապված. Այո պետք է ներառված լինի:

6-րդ հարցի հետ կապված. Նկատի ունենք արտադրողի կողմից տրամադրվող ապրանքի նկարագիր:

7-րդ հարցի հետ կապված. Մենք պահանջում ենք մեկ տարվա երաշխիք:

**Հարգանքով՝**

**գնահատող հանձնաժողովի նախագահ՝** Ս. Մարկոսյան